

վերաբերմամբ հէնց այդ է ցանկանում, որովհետև ոչ մի հոգ չէ տանում կամ աջակցութիւն չէ ցոյց տալիս այն ձգտումներին, որոնք երբեմնապէս արտայայտվում են առաջնորդ կամ հովիւ նշանակելու ու տեղական եկեղեցական մատակարարութիւնը մի շարք մարդկանց ճիրաններից ազատելու վերաբերմամբ: Այսպէս օրինակ, Իբրայիլ քաղաքի հայ եկեղեցու նորոգութեան համար 5—6 ամիս առաջ դիմումն է արված պատշաճաւոր վարչութեանը, բայց դեռ կառավարութիւնը հրաման չէ տուել: Այդ տեղի քահանան, որ Զմիւռնիայից է գնացած, ստիպված է մնալ առանց հոգևոր պաշտօն կատարելու: Բումինայում տարիներից ի վեր հաստատված թիւրքահայերը հետզհետէ ուղարկվում են իրանց ծննդավայրերը. այդ երկրի հայ քահանաները յորդորում են այդպիսի հայերին որպէս զի վերջիններս թողնեն պանդխտային կեանքը և վերադառնան իրանց ընտանեկան յարկը: Յաւալի է, որ Բումինահայերը հետզհետէ նկատելիօրէն խորթանում են ազգային եկեղեցուց ու մայրենի լեզուից:

Ունգարիայում, բացի Սուչովա քաղաքից, ուր հայերն իրանց եկեղեցին պահած են, և Աթենոպօլսի հայ համայնքից, որ հռօմէական դաւանութիւնն է ընդունած, առհասարակ հայերը չեն իմանում հայերէն: Թօքա քաղաքում միայն կարելի է հանդիպել հայերի, որոնք հայերէն գրաբար են խօսում, այն էլ ոչ այնքան դիւրութեամբ:

Բումինիայի մայրաքաղաքում, Բուքրէշում այն կարծիքն է յայտնվել, որ մինչև առաջնորդի դերըը չապահովի, վերջինս չէ կարող օգտակար լինել իր հօտին:

ՀԱՅ ԿԱԹՈՒԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ

Հայ Կաթոլիկների թիւ. Կովկասում: Տաճկաստանի հայ կաթոլիկների պատրիարք—կաթոլիկոսի ընտրութեան պայքար: Վենետիկի Մխիթարեան միաբանութեան վերջին ընդհանուր ժողովը իւր մասնորդ հետեւանքով:

Լրագրները հաղորդում են, որ հայ կաթոլիկների եկեղեցական կառավարութիւնը վերակազմելու համար

ներքին գործերի նախարարութեան մէջ հարց է յարուցուած: Հարցի քննութեանը մասնակցելու է հայ կաթողիկոսների առաջնորդ Տէր Աբրահամեանը:

— Լրագրները յայտնեցին որ ուսու կառավարութիւնը համաձայնութեան գալով Վատիկանի հետ կովկասում հայ կաթողիկ եպիսկոպոսութիւն է հաստատում, և այս առիթով հայ կաթողիկոսութեան կողմից հոգևորական ներկայացուցիչ է գնացել ս. Պետերբուրգ կարևոր խորհրդակցութեան համար: Ծրագրում է եպիսկոպոսական աթոռը հաստատել Թիֆլիզում, ուր և կը բացուի հոգևոր սեմինարիա հոգևորականներ պատրաստելու համար:

Վրացախօս կաթողիկոսները ոչ միայն չեն կամենում որ հայ կաթողիկ եպիսկոպոսութիւն հաստատուի, այլ և, ինչպէս հաղորդում են լրագրները, Թիֆլիզի նահանգում ապրող վրացախօս կաթողիկոսները բարձր իշխանութեան առաջ միջնորդութիւն են յարուցել, որ նրանց ծխական եկեղեցիներում թոյլ տրուի ծէսերը վրացերէն կատարել: Նրանք մինչև այժմ ենթարկուում էին հայ կաթողիկ կառավարութեան և ժամերգութիւնը կատարում էր հայերէն:

Մշակում կարգում ենք.

«Ռուսաստանի հայ—կաթողիկոսների ընդհանուր առաջնորդ և առաքելական կառավարիչ Տէր Սարգիս վ. Տէր Աբրահամեան վերադառնալով Պետերբուրգից կատարեց Թիֆլիզում իր պաշտօնական այցելութիւնները: Թիֆլիզի նահանգապետին և փոխարքայի դիւանատան գիրեկտօր Պետերսօնին այցելելուց յետոյ, դեկտեմբերի 15-ին երեքշաբթի օրը Տէր—Սարգիս վարդ՝ ընկերութեամբ Ա. Սարուխանեանի, ներկայացաւ Փոխարքայի օգնական Սենատօր է. Ա. Վատացիին, Մօտ կէս ժամ տևող նրանց խօսակցութիւնը վերաբերում էր հայ—կաթողիկոսների նորահաստատ թեմի անմիջական պէտքերին, իսկ երէկ, չորեքշաբթի, ժամը 12-ին, Տէր—Աբրահամեան վարդապետ և Ա. Սարուխանեան ընդունուեցին Փոխարքայից առանձին ունկնդրութեան: Ունկնդրութիւնը թէ ֓ Փոխարքայի և թէ

Սենատոր Վատացիի կողմից սիրալիր էր և մեծ յոյս կայ, թէ շուտով կիրականանան հայ—կաթողիկների հոգևոր կառավարութեան անհրաժեշտ պէտքերը:

«Բիւզանդիոն»-ում (նոյեմբ. 3) կարգում ենք.— Հայ հռոմէական գաւառական առաջնորդներէն 5—6ը, ի պատասխանի իրենց ուղղուած հեռագրին, հաղորդեր են թէ մեկնած են Պօլիս գալու և Սինօզ գումարելով, նոր Կ.—Պատրիարքի ընտրութիւն կատարելու համար: Մուշի և Կեսարիոյ մէջ ալ առաջնորդի ընտրութեան եռանուն ցանկեր պատրաստուած են, որոնք պիտի հասնին Պօլիս և պիտի տրուին Սինօզին՝ Առաջնորդի վերջնական ընտրութիւնը կատարելու համար: Հետեւաբար շատ օրինաւոր է որ, Սինօզը նախ թափուր վիճակներու առաջնորդներն ընտրէ և յետոյ Կ.—Պատրիարքը, որպէս զի ամէն վիճակ իր հոգևոր պետին մասնակցութիւնն ունենայ այս ընտրութեան մէջ, որ միմիայն եպիսկոպոսաց մէջ կ'կատարուի, ինչպէս յայտնի է: Օրինաւոր չի նկատուիր սահմանափակ թուով եպիսկոպոսաց միջոցաւ կատարել այս ընտրութիւնը: Գրած էինք թէ Գոյունեան եպիսկ. Տեղապահ ընտրուած է: Այս ընտրութիւնն հինգշաբթի գիշեր աղմկալից նիստի մը մէջ տեղի ունեցած է, որովհետեւ երեսփոխաններէ մէկ մասը գրաւոր խոստմնագիր պահանջած է Գոյունեան եպիսկոպոսէ թէ հաւատարիմ պիտի դանուի ազգ. կանոնադրութեան: Ուրիշ մաս մ'ալ կըսէ թէ քանի որ կանոնադրութիւնը պետութենէն վաւերացեալ օրէնք մը չէ, ինչպէս կ'հասկցուի այս անգամ եկած վարչական պայտուութեան ալ և քանի որ այդ կանոնին մէջ չկայ տրամադրութիւն մը որ տեղապահ մը, պատրիարք մը ուխտ ընէ կամ խոստմնագիր տայ, ապօրէն է այս ձևակերպութիւնը: Կզերը մեծաւ մասամբ այս վերջին տեսութեան յարած է, այսու հանդերձ այդ խոստմնագիրը տուեր է Գոյունեան եպիսկ.: Առ այժմ Կ.—պատրիարքական աթոռին ընտրելի են, բացի տեղապահէն՝ Թէրզեան և Ռուպեան եպիսկոպոսները:

— Մարտինի առաջնորդ Կիւլեան արքեպսկ. և Տիգրանակերտի առաջնորդ Չէլէպեան եպսկ. երէկ Պօլիս եկան և միւս առաջնորդներն ալ կսպասուին յառաջիկայ շաբթու, դեկ. 9-ին գումարելի Սինօգին մասնակցելու համար: Ատանայի առաջնորդ Թէրզեան եպսկ. գրեր է թէ իր ժողովրդեան այս վիճակին մէջ չի կրնար թողուլ Ատանան. սակայն իր ներկայութեան պէտքն զգացուեր և ինչպէս ուրիշ մէկ երկու առաջնորդներու՝ նոյնպէս իրեն ալ գրուեր է որ պատրաստուի գալու Պօլիս: Թէրզեան եպսկ. հաւաներ է և հաւանական է որ յառաջիկայ շաբթու այն ալ գայ: Միւս կողմէ տեղապահ Գոյունեան եպսկ. առատ դրամ՝ կը բերէ Հոռմէն: Առաջին անգամ եպիսկոպոսաց ճամբու ծախքին և Պօլսոյ մէջ բնակութեան ծախքին համար 20,000 ֆր. բերած էր, այս օրերս նոյնչափ գումար մ'ալ բերած է պատրիարքարանի ծախուց համար: Այս դրամական առատաձեռնութիւնները շատ կհրապուրեն զանոնք մանաւանդ, որոնք Հոռմի օգնութիւններէն և պաշտպանութիւններէն չզրկուելու համար ընտրելի կը ներկայացնեն Գոյունեան եպսկ. -ը: Առ այժմ՝ իր ընտրութեան մասին գաղափար մը չկայ:

— Հայ կաթողիկոսի պատրիարք կաթողիկոսի ընտրութեան պայքարի առիթով հայ կաթողիկ եկեղեցական վարչութեան մօտաւոր անցեալի վերաբերութեամբ հետաքրքիր յօդուածներ են տպուում «Բիւզանդիոնում»:

Սկզբում, Լիբանանի Զմառ վանքում ժԸ. դարից սկսած կար մի հոռվմէական պատրիարք, Պետրոս ընդհանուր անուամբ որ իրան կոչում էր կաթողիկոս պատրիարք տանն Կիլիկիոյ: Այս նուիրապետութիւնը սկսուած է ոմն Աբրահամ եպիսկոպոսից:

1830 թ. Սուլթան Մահմուտ Բ. հոռվմէական հայերին անջատ հասարակութիւն ճանաչելով, արտօնեց Պ. Պօլսում ունենալ արքեպիսկոպոս պատրիարք անունով: Առաջին պատրիարքն էր Անտոն Նուրիջան, 1866 թ. վախ-

ճանուեց Կիլիկիոյ տան հռովմէական կաթուղիկոս Գրիգոր Պետրոս Ը. Լիբանանի եպիսկոպոսները նոյն թուի սեպտեմբեր ամսին ժողով կազմելով պապի նուիրակի ներկայութեամբ փափագ են յայտնում միացնել Կիլիկիոյ պատրիարք—կաթուղիկոսութիւնն ու Կ. Պօլսոյ արքեպիսկոպոսութիւնը, և այսպիսով վերջ տալ հայ հռովմէական եկեղեցական իշխանութեան երկուութեանը: Ընտրում են Կ. Պօլսոյ արքեպիսկոպոս Անտոն Հասունին պատրիարք կաթուղիկոս Կիլիկիոյ Անտոն Պետրոս Թ. անուամբ և սեպտեմբերի 15-ին ստորագրած պաշտօնագրով առաջարկում պապին ի հաւանութիւն և ի հաստատութիւն, որը և հաստատում է Վատիկանը 1867 թուի յուլիսի 10-ին, և պատրիարքարանի եկեղեցական կարգապահութեան վերաբերութեամբ պապի հետեւեալ հրահանգներն է հաղորդում.

Ա. Երբ հարկ լինի պատրիարք ընտրել, քուէի իրաւունք միայն և միայն եպիսկոպոսներին պէտք է տրուի: Եւ ոչ մի աշխարհական և ոչ մի պատրուակով պէտք է չըմիջամտի այդ ընտրութեանը և ոչ իսկ ամենափոքր մի պաւստակի քօղի սակ ծածկուած:

Բ. Հայոց ընտրեալ պատրիարքները պիտի չըկարողանան բազմել իրանց աթոռը, ոչ էլ իրաւասութիւն ունենան պատրիարքարանի մէջ մինչև որ նրանց ընտրութիւնը կամ խնդիրը նախապէս չընդունուի և չըհաստատուի Հռովմայ առաքելական աթոռից:

Գ. Թափուր մնացած թեմերի եպիսկոպոսների ընտրութեան համար Սինոդ պէտք է գումարուի և ամենաարժանատիներից և կարողագոյններից երեքը պէտք է հաղորդուեն քահանայապետին (պապին), որը պէտք է ընտրի նրանցից մէկին:

Բիւզանդիոնի յօդուածագիրը ասում է, որ հայ հռովմէական հասարակութիւնը, պապի 1867 թուի պաշտօնագրից առաջ ունեցել է իւր գոյութիւնը իւր սովորութիւնները, աւանդութիւնները — Կիլիկիոյ կաթուղիկոսները իրաւունք ունէին, առանց պապի ամենափոքր

միջամտութեան, ձեռնադրել ու կարգել եպիսկոպոսներ
և ազգային իշխանութիւնն էր, որ անօրինում է, և ոչ թէ
օտար իշխանութիւնը:

Գալով Պօլսոյ արքեպիսկոպոսի իրաւասութեան, այստեղ
ևս հայ հասարակութիւնն էր կարգում իւր վարիչներին,
ինչքերը մատակարարում էին պատրիարքի և ազգից
ընտրուած ժողովի ձեռքով:

Անտոն Հասուն պապից կիլիկիոյ տան կաթուղիկոս և
Կ. Պօլսոյ պատրիարք հաստատուելուց յետոյ ձեռնադրուե-
լու համար փոխանակ Լիբանան գնալու, Ս. Պետրոսի յօբե-
լեանի պատրուակով Հռոմ գնաց և այնտեղից վերադար-
ձաւ պապի մի կոնդակով, որ յայտնի է Reversurus ան-
ուամբ որի մէջ բաց ի վերև յիշուած սահմանափակու-
թիւններէն ու ազգային իրաւունքների ոտնահարութիւն-
ներից, կար նաև հետևեալն. «Ազգի մը իշխանութիւնը կը
պատկանի կղերականին և հնազանդութիւնը՝ աշխարհա-
կանին» . . . : «Անմիտ է այն սկզբունքն, որ յարգանք կու-
տայ ժողովրդի կամքին—հանրային կամքով կամ տարբեր
կերպով յայտնուած— և զայն կը նկատէ իբր գերագոյն
օրէնք»:

Այս հարուածը չէր կարող յղգալի չը լինել ժողովրդ-
դին, Ազգի երևելիները, որոնց Անտոն—Պետրոս թ. Հա-
սուն հրաւիրել էր Ռեվերսուրուսը լսելու, վրդովուեցին:
Դիւզեան Միհրան բէյը ուրքի ելաւ, բողոքեց գոչելով.
«Եօյլէ իսէ, բիզիմ իշիմիզ գալմազը, բիզ գալկալըմ, գի-
զէլիմ—Այդպէս է, մեզ էլ բան չը մնաց, վերկենանք
գնանք»: Այսպէս սկսուեց այն հակառակութիւնը որ
տևեց մինչև Հասունի վախճանը և մինչև այժմ էլ չէ
դադարել:

Մշակում կարգում ենք. վենետիկի Ս. Ղազարի վան-
քի «Մխիթարեան միաբանութեան վերջին ընդհանուր ժո-
ղովը, որ գումարուեց այս տարվայ Օգոստոս և Սեպտեմ-
բեր ամիսների ընթացքում, որոշել է յիշեալ վանքը, սրա
մատակարարութեանը յանձնված կտակներն ու ուսումնա-

րանները, հաստատութիւններն ու գանձերը ամբողջութեամբ յանձնել Վատիկանի հսկողութեանը:—Ուրեմն Վենետիկի Ս. Ղազարի վանքի տրամադրութեան յանձնուած գումարները—որպիսի են Մուրադ—Ռափայէլեան և այլն, այսուհետև պէտք է տնօրինի Վատիկանը և Վենետիկի Ս. Ղազարի այժմեան միաբանութիւնը մոռանալով իւր նախկին աւանդութիւններն ու նախորդների ջանքը—ապրել նախնեաց յիշատակներով, ազգային հոգւով—խաչ պէտք է քաշի այդ ամենի վերայ և այսուհետև ապրի Հոովմի ներշնչութեամբ, ազգային գումարները Վատիկանի տրամադրութեան տակ ազգի ուճացման ծառայացնի: Մխիթարեանները ոչ ապաքէն Մուրադ Ռափայէլեանի կտակի կատարողներն են և ոչ տէրը: Այդ կտակով պէտք է ուսում առնեն հայ ժանուկներ առանց խտրութեան կրօնի, ուրեմն դպրոցը պէտք է լինի զուտ ազգային: Այդ, Վատիկանը իրան իրաւունք պէտք է համարի մեր զուտ ազգային գործերը տնօրինելու և պէտք է թոյլ տրուի նրան այդ:

Իւրզանդիսնում էլ կարգում ենք.

— Վենետիկի Մխիթարեան վանքին մէջ մատակարարական ժողով մը հաստատուեր է Հոովմի հակակշռին տակ և այս մտօք փոփոխութիւններ եղեր են վանական կանոնադրութեան մէջ. Մխիթարեան միաբանութիւնը մինչև հիմա ազատ էր Վենետիկի կարտինալին իրաւասութենէն, սակայն Հոովմի իրաւասութեան ներքև էր հոգևոր գործոց մէջ միայն: Վերջին Սարբեան և Եփրիկեան գայթակղութիւնները պատճառ եղան որ միաբանները դիմում ընեն Պապին, որ նախապէս իբրև Վենետիկի կարտինալ շատ մօտէն կճանչնար Մխիթարեանները: Պապը կարտինալ մը զրկեց ներկայ գտնուելու վերջին միաբանական ժողովին, ուր կարգադրութիւններ եղան վանական մատակարարութեան տեսակէտով և Հոովմի իրաւասութիւնն ընդարձակուեցաւ Մխիթարեան վանքին մէջ, ուր վարչական տկարութեան նշաններ երևան կուգան դժբախտաբար: